

Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային Ակադեմիա
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Մարգարյան Լևոն Նիկոլի
Հանրային տարածքների փոխակերպումները Երևանում

Է00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

Մեղմագիր

Երևան - 2016

Институт археологии и этнографии
Национальной Академии Наук
Республики Армении

Маргарян Левон Николович
Трансформации публичных пространств г. Еревана

Автореферат

диссертации на соискание ученой степени
кандидата исторический наук
по специальности 07.00.04 - "Этнография"

Ереван – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու՝ Ա.Զ. Թադևոսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝
Պատմական գիտությունների դոկտոր՝ Հ. Տ. Մարության
Պատմական գիտությունների թեկնածու՝ Ռ.Ս. Օհանջանյան

Առաջատար կազմակերպություն՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր,
Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության թանգարան:

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հունիսի 28-ին, ժ.14:00-ին, ՀՀ ԳԱԱ
Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 հնագիտության
և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան – 0025, Չարենցի
15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. մայիսի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու –

Հ.Ա. Մելքոնյան

Тема диссертации утверждена на ученом совете Института археологии и этнографии
НАН РА

Научный руководитель – кандидат исторических наук А.З. Тадевосян

Официальные оппоненты - доктор исторических наук А.Т. Марутян
кандидат исторических наук Р.С. Оганджян

Ведущая организация – Мемориальный комплекс Сардарapatской битвы,
Национальный музей этнографии Армении и истории освободительной борьбы.

Защита состоится 28 июня 2016 г., в 14:00 , на заседании Специализированного совета 007
по археологии и этнографии при Институте археологии и этнографии НАН РА (по
адрессу:Ереван 0025, ул. Чаренца 15).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института археологии и
этнографии НАН РА.

Автореферат разослан 28 мая 2016 г.

Ученый секретарь Специализированного совета,
кандидат исторических наук

У.А. Мелконян.

Ուսումնասիրության արդիականությունը

Ուսումնասիրության բուն առարկան արդի փուլում շրջանառվող նորահայտ «հանրային տարածք» հասկացությունն է և վերջինիս շահարկումը ժամանակակից քաղաքային միջավայրում տեղի ունեցող սոցիալ-մշակութային կոնկրետ գործընթացներում: Դրան են նվիրված ատենախոսության առաջին և երրորդ գլուխները:

Հետխորհրդային կամ արդի ժամանակահատվածում, պայմանավորված տնտեսակարգի և քաղաքական կարգի նոր մոդելների անցմամբ, Հայաստանում վերանայվեց նախկինում՝ գլխավորապես պետական-հասարակական համարվող սեփականությունը, ինչի հետևանքում դրա մի մասը օտարվեց և դարձավ առանձին ֆիզիկական կամ իրավական անձանց սեփականությունը: Մասնավորեցվող արդյունաբերական, սպասարկող ձեռարկությունների, կրթական, բնակելի և այլ տարածքների թվում հայտնվեցին նաև Խորհրդային շրջանում որպես հանգստի և ժամանցի գոտի ծառայող բացօդյա տարածքները՝ այգիները, պուրակները, բակերը, կամ դրանց մաս կազմող առանձին հատվածները, ինչը մասնակիորեն շարունակվում է նաև այսօր:

Անկախության առաջին երկու տասնամյակներում նշված գործընթացը ընդգծված դիմադրության չէր արժանանում և բուռն բանավեճերի ու քննադատության առիթ չէր: Կարծես ամեն ինչ տեղի էր ունենում լռելյայն կերպով և հասարակական անհասկանալի փոխամամայնությամբ: Սակայն, հատկապես 2010թ-ից սկսած, քաղաքացիական տարբեր խմբեր և միավորումներ ընդդիմանում են մասնավորեցմանը և, կարելի է ասել, հասարակական այդ տարածքների պահպանության համար մղվող պայքարը դառնում է հայաստանյան օրակարգային և առանցքային թեմաներից մեկը արդի շրջանում: Այդ պայքարի համտեքստում է, որ ասպարեզ է իջնում և շրջանառություն է ստանում «հանրային տարածք» հասկացությունը:

Ուշագրավ է ոչ միայն այն, որ մեր երկրի և հատկապես Երևան քաղաքի պատմության մեջ հանրային տարածքների համար պայքարն, ըստ էության, հասարակական նոր երևույթ է: Հանրային տարածքների համար և նաև հանրային տարածքների օգտագործմամբ իրականացվող քաղաքացիական շարժումները և միջոցառումները՝ կազմակերպչական, գործառութային, կառուցվածքային և խորհրդանշանային տեսանկյուններից մեր իրականությունում նույնպես սոցիալ-մշակութային նորահայտ երևույթ են և կարիք ունեն ազգագրական ու

մարդաբանական ուսումնասիրության: Ուսումնասիրության կարիք ունեն նաև արդի փոլում հասարակության սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքում և հասարակական ընկալումներում տեղի ունեցած այն փոփոխությունները, որոնք պայմանավորում են վերոհիշյալ գործընթացները:

Աշխատանքի նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակը պատմական հոլովությամբ Երևան քաղաքի հանրային տարածքների սոցիալ-մշակութային փոխակերպումների ուսումնասիրությունն է:

Ատենախոսության առջև դրված խնդիրներն են.

1. Հանրային տարածքների ֆիզիկական նկարագրի և տեղադրության ճշգրտումը,
2. Հանրային տարածքների տիպաբանումը ըստ գործառույթների,
3. Հանրային տարածքները սահմանող սոցիալական խմբերի նույնականացումը,
4. Հանրային տարածքների սոցիալ-մշակութային փոփոխությունները պայմանավորող քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական, էթնիկական, կրոնական գործոնների բացահայտումը:

Քանի որ ատենախոսությունը նվիրված է առերես հաղորդակցություն ենթադրող հանրային բաց տարածքների ուսումնասիրությանը, անհրաժեշտ է համարվել ընդհանուր գծերով ներկայացնել դրանց ֆիզիկական բնութագիրը, տեսակները և տեղադրությունը, որոնց վերաբերյալ գիտական, պաշտոնական, լրատվական և հանրային դիսկուրսներում բացակայում են հստակ ու միանշանակ մոտեցումները:

Վերոհիշյալ դիսկուրսներում բացակայում է նաև միանշանակ մոտեցումը հանրային տարածքների գործառույթների վերաբերյալ: Ուստի ատենախոսության առջև դրված խնդիրներից մեկը հանրային տարածքները ըստ գործառույթների տիպաբանելն է: Քանի որ մինևույն հանրային տարածքը կարող է իրականացնել տարբեր գործառույթներ /կրոնաձիսական, քաղաքական և քաղաքացիական ակցիաներ, ժամանց, գիտական և արվեստային քննարկումներ և այլն/ ապա մեր խնդիրն է եղել նաև տարբերակել առաջնային և երկրորդային գործառույթները: Բացի այս ատենախոսությունում առաձևացվում է նաև մետագործառույթ հասկացությունը՝ հաշվի առնելով հանրային տարածքների առավել խորքային և պակաս տեսանելի գործառույթը, որն է՝ քաղաքային հանրության տարբեր խմբերի համախմբումը /ինտեգրացիան/: Այս տեսակետից հանրային տարածքները բաժանվում են գլխավոր և ոչ գլխավոր տիպերի:

Թե ինչ գործառույթների կարող են ծառայել հանրային տարածքները կամ մատչելիության ինչպիսի մակարդակ ունեն դրանք, հաճախ պայմանավորված է այն հանգամանքով ,թե քաղաքային բնակչության որ խմբերն են սահմանում դրանք:

Վերջինս արտահայտվում է հանրային տարածքներում կազմակերպվող հաղորդակցության եղանակներում, հաղորդակցության լեզվում, հանրային տարածքներում հայտնված խորհրդանիշներում և այլն: Ուստի ատենախոսության խնդիրներից մեկը «հանրային տարածքը» ձևակերպողներին նույնականացնելն է:

Հանրային տարածքներին վերագրվող գործառույթների բնույթը ուղղակիորեն կապված է քաղաքային բնակչության սոցիալ-մասնագիտական, էթնիկական, դավանական և ժողովրդագրական կազմի, հասարակական աստիճանակարգում այդ խմբերի զբաղեցրած սանդղակի հետ և դրանցում տեղի ունեցած փոփոխությունները պայմանավորում են ինչպես նախկին հանրային տարածքների գործառույթային փոխակերպումները, այնպես էլ նոր հանրային տարածքների հանդես գալը: Մեր ատենախոսության խնդիրներից մեկը պատմական հոլովությունում այդ գործընթացի նկարագրությունն է:

Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն

Ատենախոսության մեջ օգտագործվել են բազմաթիվ հեղինակների հոդվածներ և մենագրություններ, որոնք ըստ մեր աշխատանքի տարբեր առումների հետ առնչության՝ բաժանել ենք հետևյալ խմբերի.

«Հանրային տարածք» հասկացության հետ կապված տեսական հարցերը քննության են ենթարկվել Յ. Յաբերմասի, Հ. Արենդթի, Ջ. Ուեյնթրաուբի, Պ. Բուրդյեի, Ս. Բենհաբիբի, Ջ. Բաումանի աշխատություններում: Սոցիալական տարածքը քննության է ենթարկվել Հ. Լեֆևրի կողմից: «Հանրային» հասկացություն մեկնաբանվել է Գ. Թարդի և Ի. Կանտի աշխատություններում:

Հանրային տարածքների հետ կապված արդի պրակտիկաների ուսումնասիրությանն են վերաբերում Դ. Միթչելի, Փ. Մարքուզեի, Շ. Ջուկինի, Ա. Յանգի, Մ. Քվոնի, Ռ. Ֆլորիդայի, Ջ. Ջեկոբսի, Օ . Պաչենկովի, Ա. Ժելնինիայի աշխատությունները:

Մարդաբանական, մշակութաբանական և սոցիոլոգիական տեսանկյուններից հանրային տարածքները ուսումնասիրության են արժանացել Ֆ. Արյեսի, Ռ. Սենեթի, Ֆ. Բիանչինիի, Հ. Շչուենգելի, Ռ. Փարկի, Դ. Քալաբիի, Ա. Մադանիփուրի, Լ. Լոֆլանդի, Ն. Ֆրեզերի աշխատություններում:

Հրապարակային միջոցառումների ծիսական, խաղային և վիզուալ առումներին նվիրված ուսումնասիրություններ են կատարել Լ. Աբրահամյանը, Գ. Շագոյանը, Ա. Թադևոսյանը, Հ. Մարությանը: Հանրային տարածքի մշակութային կազմակերպմանը նվիրված աշխատություն ունի Հ. Մելքունյանը:

Հնագույն շրջանի, այդ թվում՝ Երևանի տարածքում պեղված քաղաքային բնակավայրերին և հանրային տարածքներին աշխատություններ են նվիրել Բ. Պիոտրովսկին, Հ. Ավետիսյանը, Ա. Բոբոխյանը, Ա. Գնունին, Օ. Խնկիկյանը: Երևանի

քաղաքական և տնտեսական պատմությունը ուսումնասիրության է ենթարկվել Բ. Առաքելյանի, Թ. Հակոբյանի, Վ. Գրիգորյանի, Ս. Կրկյաշարյանի, Ժ. Շարդենի, Ի. Շոպենի և այլոց աշխատություններում:

Երևանի Ճարտարապետությանը նվիրված աշխատություններ ունեն Ա. Թամանյանը, Վ. Հարությունյանը, Մ. Հասարթյանը, Ա. Մելիքյանը, Գ. Ռաշիդյանը, Մ. Գասպարյանը, Լ. Դուրխանյանը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Պայմանավորված հետազոտվող նյութի մատչելիությամբ, ատենախոսության տարբեր բաժինների շարադրանքի համար կիրառվել են հետազոտական տարբեր մոտեցումներ:

Երևանի հնագույն և միջնադարյան շրջանի հանրային տարածքների ուսումնասիրության համար օգտվել ենք գլխավորապես տարբեր հեղինակների գիտական աշխատություններից: Նոր շրջանի հանրային տարածքների հետազոտության համար, վերոհիշյալից բացի, ծանոթացել ենք նաև ժամանակի մամուլի հրապարակումներին: Խորհրդային շրջանում, ի հավելումն նշվածի, իրականացվել են նաև ազգագրական հետազոտություններ: Հետխորհրդային շրջանում այդ ամենին զուգահեռ կիրառվել է ուղղակի կամ մասնակցային դիտման մեթոդը, ինչպես նաև կենսագրական հարցման մեթոդը: ՁԼՄ հրապարակումները և սոցիալական ցանցերի քննարկումները գրանցելու նպատակով օգտագործել ենք փաստաթղթային հետազոտության մեթոդը:

Հետազոտված նյութը ենթարկվել է պատմահամեմատական, ֆունկցիոնալ-կառուցվածքաբանական և տեքստաբանական վերլուծության:

Հետազոտության գիտական նորույթը

Ատենախոսական աշխատանքում առաջին անգամ ա/հանրային տարածքները ենթարկվում են գործառույթային, խորհրդանշանային և կառուցվածքային համալիր քննության,

բ/կարևորվում և հատուկ քննության է արժանանում հանրային տարածքի համախմբող /ինտեգրատիվ/ մետագործառույթը,

գ/դիտարկվում են հանրային տարածքների գործառնության և բնակչության կազմի առնչությունները

դ/Երևանի օրինակով դիտարկվում են հանրային տարածքների սոցիալ-մշակութային փոխակերպումները պատմության համատեքստում

Հետազոտության արդյունքերը կարող են կիրառվել

ա/քաղաքի հանրային տարածքների ճարտարապետական պլանավորման մեջ /լրգիստիկական ու բնապահպանական մոտեցումներից գատ/

բ/քաղաքային մենեջմենթի /urban management/ մեջ:

զ/քաղաքում տեղի ունեցող զանգվածային իրադարձությունների քաղաքագիտական, տնտեսագիտական և մշակութաբանական մեկնաբանություններում:

Ատենախոսության միջոցով շրջանառության մեջ են դրվում նաև նոր բանավոր և վիզուալ նյութեր:

Աշխատանքի ժամանակագրական սահմանները

Ժամանակագրական առումով, Երևան քաղաքի հանրային տարածքների քննությունը, առանձին ժամանակամիջոցների բացառմամբ /մ.թ.ա. 6 -մ.թ. 15-րդ դդ/ ընդգրկում է բրոնզեդարյան շրջանից մինչև մեր օրերը: Սակայն, պայմանավորված «հանրային տարածք» հասկացության նորահայտ լինելով, ինչպես նաև դրա գործնական կիրառությամբ, ատենախոսության մեծ մասը վերաբերում է արդի՝ ետխորհրդային շրջանում Երևանի հանրային տարածքների փոփոխություններին:

Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը

Ատենախոսության մեջ ներկայացվող առումները և առանձին դրույթները քննարկվել են տարբեր գիտաժողովներում և գիտական հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից /յուրաքանչյուրն իր հերթին՝ ենթազույգներից/, եզրակացությունից և գրականության ցանկից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածությունում ներկայացվում են ատենախոսության նպատակն ու խնդիրները, շարադրանքում օգտագործվող հիմնական հասկացությունները, աշխատանքի հետազոտական ու վերլուծական մեթոդաբանությունը, թեմայի ուսումնասիրվածության վիճակը և գիտական հրապարակումները, ատենախոսության արդիական, նորույթային, կիրառական նշանակությունները, ատենախոսության համառոտ կառուցվածքը:

ԳԼՈՒԽ I

«ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ» ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԴԻՄԿՈՒՐՍՈՒՄ

Քանի որ հայաստանյան հանրային և գիտական միջավայրերում «Հանրային տարածք» հասկացությունը տարածվել է արևմտյան գիտական դիսկուրսի ազդեցությամբ, ապա այս գլխում ներկայացվում են այն հիմնական չափումները և մոտեցումներ, որոնց օգնությամբ արևմտյան հեղինակները ձևակերպում են «հանրային տարածքը»: Գլուխը բաղկացած է չորս ենթազույգներից:

1.1 Հանրային տարածքը իբրև ֆիզիկական տարածություն: «Հանրային տարածքին» վերաբերող գրականության, պաշտոնական-փաստաթղթային և

բառարանային նյութերի ուսումնասիրությունը պարզում է, որ գոյություն չունի այդ հասկացության ֆիզիկական բնութագրի վերաբերյալ միանշանակ և հստակ որևէ ձևակերպում: Որոշ ուսումնասիրողներ /Յ. Հաբերմաս, Պ. Բուրոյե և ուրիշներ/ այդ հասկացության տակ նկատի ունեն ինչպես ֆիզիկական այնպես էլ վիրտուալ տարածություններ՝ լրատվություն, մամուլ, տպագիր գրականություն: «Հանրային տարածքը» իբրև ֆիզիկական տարածություն դիտարկող հեղինակները, այն նկարագրելիս ավելի հաճախ կենտրոնանում են տարածքի գործառույթների վրա և չեն խոսում դրա ֆիզիկական չափումների մասին: Այդուհանդերձ, համեմատելով ու իմի բերելով տարբեր մոտեցումները հնարավոր է եղել առանձնացնելու հետևյալ բնութագրերը: 1. Ֆիզիկական առումով հանրային տարածք է ցանկացած բաց ու հարաբերականորեն ընդգրկուն տարածքը, որտեղ հնարավոր է տարբեր՝ ծանոթ և անծանոթ մարդկանց միաժամանակ գտնվելը, նրանց միջև վերբալ, կինետիկ և վիզուալ հաղորդակցությունը: 2. Հանրային տարածք ասելով նկատի է առնվում առաջին հերթին հրապարակը: Իբրև հանրային տարածքներ են դիտարկվում նաև զբոսայգիները, պուրակները, պողոտաները, բակերը, նաև մի շարք փակ տարածքներ՝ սրճարաններ, թեյարաններ, ժամանակակից հիպեր-առևտրական տարածքներ /մուլեր, հիպերմար-քեթներ և այլն/: 3. Իրական /ոչ վիրտուալ/ հանրային տարածքների մասին խոսելիս ուսումնասիրողները բացառապես նկատի ունեն քաղաքային միջավայրը:

1.2 Հանրային տարածքի գործառույթները: Հանրային տարածքի՝ դասական համարվող հետազոտողների՝ Հ. Արենդթի և Յ. Հաբերմասի ուսումնասիրություններում հանրային տարածությունը դիտարկվում է քաղաքական համատեքստում: Սակայն, եթե Հ. Արենդթը այն դիտարկում է իբրև քաղաքական գործողության տարածք, ապա Յ. Հաբերմասը դիտում է իբրև քաղաքական հաղորդակցության տարածք, որտեղ տարբեր մտքեր և գաղափարներ են փոխանակվում: Հանրային տարածքը իբրև քաղաքական գործողության տարածք են դիտում նաև Դ. Միթչելը, Փ. Մարքուզեն և ուրիշներ: Ըստ այդ հեղինակների՝ գործողությունն է տարածքը դարձնում հանրային կամ հանրային տարածքը քաղաքական պայքարի ասպարեզ է, որտեղ իրականացվում է քաղաքի նկատմամբ իրավունքը: Ըստ Դ. Միթչելի. «Տարածքը հանրային է դառնում այն ժամանակ, երբ ճիշդ և պահանջը դառնում են լսելի»: Փ. Մարքուզեն հանրային տարածքը դիտում է իբրև քաղաքական տարածություն որի համար պետք է պայքարել»:

Մեկ այլ խումբ հետազոտողներ /Ֆ. Արյես, Ռ. Սենեթ, Ֆ. Բիանչինի, Հ. Շչունենգելի և ուրիշներ/ որոնց կարելի է համարել «մշակութային ուղղության» ներկայացուցիչներ, հանրային տարածքի գործառույթը տեսնում են ցանկացած բնույթի հանրային շփումներ և հաղորդակցության հնարավորություն ապահովելու

մեջ: Ֆ. Արյեսը, օրինակ, վիճարկում է հին վարչակարգերի օրոք հանրային տարածքը իբրև քաղաքական ակտիվության ասպարեզ դիտարկելը, պնդելով, որ այն ժամանակներում դեռևս չէր տեղի ունեցել ընտանիքի և ինտիմ հարաբերությունների «մասնավորեցումը» և «ամբողջ կյանքը ապրվում էր իբրև հանրային»: Մշակութային ուղղության հետազոտողների համար հանրային տարածքը տարասեռ /հետերոգեն/ տարածք է և ոչ թե համերաշխության ու կոլեկտիվ գործողության տարածք, ինչպես նաև ոչ՝ կոմունիկատիվ միջոցներով ռացիոնալ փոխհամաձայնության /կոնսետուսի/ հասնելու տարածք: Ռ. Մենեթի կարծիքով՝ հանրային տարածքի գլխավոր արժեքը անձանոթի և ծանոթի հանդիպման փորձն է, որովհետև «տարօրինակ բաները և անձանոթ մարդիկ կարող են մերժել ծանոթ գաղափարները և վերագրված ճշմարտությունները»: Ֆ. Բիանչինի և Հ. Շչուենգելի կարծիքով՝ հանրային տարածքները պետք է պատրաստ լինեն իրենց մեջ ընդունելու ցանկացած գործողություն, միջոցառում, որոնք նախաձեռնված են ցանկացած հանրության, տարբեր հետաքրքրություններ, գեղագիտություն, ոճ ունեցող խմբերի կողմից, որովհետև հանրային գաղափարը կապված է «մտածողության հորիզոնները լայնացնելու, փորձարարության, արկածի, բացահայտման, անակնկալի» փորձառության հետ: Այս մոտեցման հետևորդները հանրային տարածքը պատկերացնում են որպես սոցիալականացնող (sociability) տարածք, որը հնարավոր է դարձնում սոցիալական փոխազդեցությունը, սոցիալական կյանքը: Ս. Ուենթեներթը հանրային տարածքի սոցիալականացնող գործառույթը կարևորում է հատկապես երիտասարդության տեսանկյունից, որոնց համար այն սոցիալականացման հրապարակներից մեկն է: Ռ. Փարկը հանրային տարածքը դիտարկում է իբրև մի վայր, որտեղ սկիզբ են առնում միմյանցից կտրված անանուն /անոնիմ/ քաղաքացիների համախմբման գործընթացները՝ մեկ քաղաքային /կամ շրջանային/ հանրության մեջ:

Այսպես կոչված՝ «մշակութային տնտեսագիտության» հետևորդները /Ա. Յանգ, Մ. Քվոն, Ռ. Ֆլորիդա, Ջ. Ջեկոբս և ուրիշներ/ հանրային տարածքները դիտարկում են, որպես մշակույթի արարման և ստեղծագործականության միջավայր: Ըստ Ջ. Ջեկոբսի՝ հենց քաղաքային հանրային վայրերն են, որպես անհատական և խմբային տարբերությունների անկանխատեսելի հանդիպման վայրեր, իթանում ստեղծագործականությունը /կրեատիվությունը/, ապահովելով տարբեր գաղափարների անսպասելի ընտրությունն ու վերընտրությունը, հեռանկարը և մեկնաբանումները:

1.3 Հանրային տարածքի իրավունքը: Հանրային տարածքին վերաբերող հետազոտություններում քիչ են այնպիսիք, որոնք ուղղակի խնդիր են հետապնդել անդրադառնալու դրա իրավական և էթիկական առումներին, ի մասնավորի՝ թե

ովքեր են ձևակերպում տարածքի գործառույթները, ինչ նպատակներով կարող են օգտագործվել հանրային տարածքները և այլն: Այդուհանդերձ, փորձել ենք ատենախոսության այս հատվածում ներկայացնել նշված առումներին վերաբերող ուղղակի և անուղղակի մեկնաբանությունները, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել չափավորական և արմատական խմբերի:

Չափավորական թևի ներկայացուցիչ կարելի է համարել Յ. Հաբերմասին, ով պետությունը դիտում է որպես «հանրային իշխանություն», որի հանրային բնույթը կապված է այն խնդիրների հետ, որոնք պետք է իրականացնի պետությունը, այսինքն հոգ տանի իր քաղաքացիների ընդհանուր բարօրության մասին: Այդպիսով, հանրայինի տակ մի կողմից նկատի է առնվում ընդհանուր մատչելիությունը, մյուս կողմից՝ հասարակական վերահսկողությունը: Յ. Հաբերմասն առանձնացնում է երկու տեսակի հանրություններ. «ուժեղ» և «թույլ»: Առաջինը իշխանական ինստիտուտներն են՝ այսինքն կազմակերպված, ֆորմալ և որոշումներ ընդունելու և կատարելու առաջնահերթությամբ օժտված հանրությունը: Երկրորդը՝ անկազմակերպ, ոչ ֆորմալ հանրային ոլորտն է, որը ձևավորում է հանրային կարծիքը, բացահայտում է հանրային ուշադրության արժանի նոր խնդիրները, որոնց վերաբերյալ, սակայն, այն ազատված է որոշում կայացնելու պարտավորությունից:

Ն. Ֆրեզերը քննադատելով Հաբերմասի կողմից հանրությունը «թույլի» և «ուժեղի» բաժանելը, կարծում է, որ պետության առանձնացումը քաղաքացիական հասարակությունից և «թույլ» հանրությանը օժտելով որոշումներ կայացնելու լիազորությունով, վտանգի տակ է դնում քաղաքացիական հասարակության կողմից պետության աշխատանքը քննադատորեն վերահսկելու կարողությունը:

Ջ. Դաունին ու Ն. Ֆենթոնը անդրադառնալով ակտիվիստական գործունեությանը վերաբերող հետազոտություններին, արձանագրում են, որ դրանցում խոսքը գլխավորապես գնում է բազմաթիվ հանրային ոլորտներ ստեղծած «թույլ» հանրությունների մասին, որոնք միևնույն ժամանակ ճանաչում են իշխող /դոմինանտ/, «ընդհանուր» հանրային ոլորտի առկայությունը: Ջ. Ուեյնթրաուբը կարևորում է հանրային տարածքը գործարար ոլորտի վերահսկողությունից ազատագրելը:

Ռ. Մենեթի համոզմամբ. «Գրավիր Ուոլ Սթրիթը» /Occupy Wall Street/ շարժումը տեսանելիորեն ի ցույց է դնում հանրային տարածքին վերաբերող գլխավոր հարցը՝ ու՞մ է պատկանում այն: Ո՞վ կարող է դրանից օգտվել: Մենեթը բարձրացնում է քաղաքային տարածքի համարժեքության խնդիրը, հղելով հանրային վայրերում դրանք «գրավող քաղաքացիների» հանգրվանելու նոր եղանակը՝ նրանք չեն անցնում կողքով, այլ մնում են այնտեղ, բավարարում են առօրյա բոլոր

պահանջմունքները, ինչպես նաև վերահսկողության տակ են առնում տարածքը, հետևում են դրա մաքրությանն ու պահպանությանը:

1.4 Հանրային տարածքի առումները: Հիմնվելով ակադեմիական դիսկուրսում հանրային տարածքի վերաբերյալ արտահայտված տարբեր մոտեցումների վրա, ինչպես նաև, նկատի ունենալով սույն ուսումնասիրության առաջ դրված բուն նպատակն ու խնդիրները, առանձնացվում են հանրային տարածքի հետևյալ, որոշ իմաստով կատարյալ /իդեալական/ առումները.

Ֆիզիկական տեսանկյունից հանրային տարածքներ կարող են լինել հրապարակները, զբոսայգիները, պուրակները, այգիները, փողոցները, մի խոսքով բոլոր այն քիչ թե շատ մեծ տարածքները, որոնք ունեն առավելագույն մատչելիություն և չեն սահմանափակված վճարով, իշխանական կամ որևէ հասարակական խմբի միանձնյա որոշումներով: Այս տեսանկյունից սրճարանները, թեյարանները, էլիտար ու այլ խմբային ակումբները, իշխանական հանդիսությունների ծառայող հրապարակներն ու շինությունները ոչ լիարժեք հանրային տարածքներ են:

Հանրային տարածքի կարևոր հատկանիշներից մեկը թափանցիկությունն է: Հանրային տարածքում կատարվողը, անկախ այնտեղ գտնվել-չգտնվելու հանգամանքից, հասանելի է բոլորին: Հանրային տարածքը բաց, մատչելի տարածք է և հասանելի է տվյալ հանրության բոլոր անդամներին, անկախ նրանց էթնիկական, դավանական, սոցիալական, մասնագիտական, գենդերային պատկանելությունից:

Հանրային տարածքի գլխավոր գործառույթը քաղաքային հանրության տարբեր խմբերի ինտեգրման հնարավորություն ապահովելն է: Հանրային է համարվում այն տարածքը, որտեղ մարդիկ հայտնվում են իրենց կամքով և ոչ թե բռնությամբ և սահբեկությամբ: Հանրային տարածքը բազմաբնույթ /վերբալ, ոչ վերբալ, վիզուալ/ հաղորդակցության տարածք է:

ԳԼՈՒԽ II

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ Մ.Թ.Ա. 3-ԴԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻՑ
ՄԻՆՉԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ /1988թ./

2.1 Հանրային տարածքները III հազարամյակի կեսերից մինչև մ.թ.ա VI դարը:
Կրոնածիսական հրապարակի հանրությունը: Քննվող ժամանակահատվածում քիչ թե շատ պեղված հանրային տարածքը հրապարակն է, որն առկա է Շենգավիթի հնավայրում, Էրեբունի ամրոցում և Թեյշեբաինի ամրոցի և Թեյշեբաինի քաղաքային հատվածներում: Էրեբունի ամրոցի և Թեյշեբաինի միջնաբերդի հրապարակներում իշխող դիրք է ունեցել սրբատեղին՝ տաճարը: Ենթադրվում է, որ սրբատեղի կարող էր լինել նաև Թեյշեբաինի քաղաքային հրապարակում և

Շենգավիթում: Միջնաբերդ և պարիսպ ունեցող բնակավայրերը հնագույն շրջանում ունեին գլխավորապես ռազմաստրատեգիական նշանակություն և ապաստան էին արտաքին թշնամիներից պաշտպանվելու համար: Ուստի, այդ գաղափարն էր քաղաքային հանրության հիմնական համախմբող գործոնը, որն էլ արտահայտվում էր քաղաքի կամ երկրի ռազմական աստվածներին նվիրված տաճարի շուրջ կազմակերպված հանրային տարածքում՝ հրապարակում: Ըստ այդմ, հրապարակը ծառայեցվում էր զինվորական և կրոնական հանդիսություններին: Բացության և թափանցիկության տեսանկյունից քննո առարկա հրապարակները ունեին սահմանափակ մատչելիություն և հասանելի էին հիմնականում ռազմաքաղաքական ու քրմական վերնախավին, քաղաքում տեղակայված զինվորականությանը, ինչպես նաև նրանց շահերը սպասարկող արհեստավորությանը և ծառայողներին:

2.2 Հանրային տարածքները Երևանում. XVI-XVIII դդ.

Շուկայական հրապարակի հանրությունը:

Քննվող ժամանակահատվածում որպես բաց հանրային տարածքներ հիշատակվում են 5 հրապարակներ, որոնք բոլորը գտնվել են Երևանի քաղաքային հատվածում, ընդ որում՝ բուն կամ հին քաղաքում՝ Շահարում: Դրանք էին՝ Հուսեին-Ալի խանի կամ Մզկիթի, Խանբաղի, Ջալիսանի, Ֆահլա-բազարի, Ցախի, Մեծ կամ Ղանթարի հրապարակները: Եվ մեկ հրապարակ գտնվել է Երևան բերդի ներսում: Բոլոր հրապարակները ծառայել են նախևառաջ շուկայական գործառույթին, դրանց պարտադիր բաղադրիչներն են եղել մեծ ու փոքր խանութները, կրպակները, քարվանսատները:

Բացի շուկայական գործառույթից Գլխավոր հրապարակը ծառայել է նաև այլ նպատակների: Թ. Հակոբյանի կարծիքով՝ այն սուսկ առևտրի կենտրոն լինելուց բացի, բոլոր տեսակի տնտեսական գործարքների հիմնական վայրն էր: Սակայն միայն տնտեսական գործառույթով հրապարակի կյանքը չէր սահմանափակվում: Երևանի Գլխավոր հրապարակի վերաբերյալ բավականին համապարփակ նկարագրություն է տվել Ժ. Շարդենը: «Երևանի հրապարակը /Մեծ հրապարակը-Լ.Ս./, որը շրջապատված է ծառերով, իրենից ներկայացնում է մի քառակուսի, որի անկյունագիծը հավասար է 400 քայլի, այն ծառայում է զբոսնելու, կարուսելի, կոխի, ձիավարության և ընդհանրապես բոլոր վարժությունների համար, ինչպես հետիոտն, այնպես էլ ձիով»: «Երաժիշտներն ու պարողները արևելցիների միմոսներն են կամ կատակերգակները, կամ ավելի շուտ դա նրանց օպերան է, որովհետև այնտեղ միայն չափածո են երգում և արձակը բնավ չի մտնում նրանց երգերի մեջ»: Այդ, էթե կարելի է ասել, ժողովրդական փողոցային ներկայացումները, աշուղների և լարախաղացների ելույթների հետ միասին մեծ բավականություն են պատճառել բնակիչներին: Ընդ որում, Երևանում ելույթ էին ունենում ոչ միայն տեղական

աշուղները, լարախաղացներն ու կատակերգակները, այլև ուրիշ քաղաքներից ու գավառներից եկածները: Ի. Շոպենի տեղեկություններից պարզ է դառնում, որ շուկահրապարակներ են եկել նաև հենց այնպես, պարապությունից և երբեմն առանց որևէ գործի՝ «առավոտից մինչ երեկո» խոնվել է հրապարակում: Այսինքն, մարդիկ այստեղ հավաքվել են նաև պարզապես հաղորդակցվելու, միմյանց հետևելու, ճանաչելու նպատակով:

Ուշագրավ է, որ կրոնաձիսական գործառույթ իրականացնող հաստատությունները անմիջապես ոչ թե հրապարակի կենտրոնում են, այլ դրանից որոշակի հեռավորության վրա: Շարդենի նկարագրությամբ՝ Մեծ մեյդանը գտնվում էր Եպիսկոպոսի նստավայրի և դրա կողքին կառուցված մզկիթից 300 քայլ հեռավորության վրա: Մզկիթն ավելի մոտ տեղադրություն է ունեցել հրապարակին՝ Բերդի տարածքում: Բազմեթնիկ, բազմադավան, սոցիալական բավականին խրթին կազմ ու ներխմբային շփումներում պարփակված քաղաքային բնակչությունը, ինչի մասին են է վկայում նաև քաղաքում թաղերի՝ էթնիկ ու կրոնական հիմքերի վրա բաժանվածությունը, բնականաբար պետք է ունենար այնպիսի հանրային տարածք, որտեղ հաղորդակցության հիմքում կլինեին նմանությունը: Այդպիսին, քննվող ժամանակահատվածում հանդիսանում էր առևտուրը:

2.3 Հանրային տարածքները Երևանում 1830-ականներից մինչև 1920թթ.:
Քուլվարային հանրությունը: Քննվող ժամանակաշրջանում երևանյան հանրային տարածքները ֆիզիկական, գործառնական և կարգավիճակային հիմնավոր փոփոխությունների են ենթարկվում: Սա պայմանավորված էր ինչպես Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու հետևանքում՝ ռուսական մշակույթի աճող ազդեցությամբ, այնպես էլ կապիտալիստական հարաբերությունների ձևավորման համաշխարհային միտումներով:

Նախ Միջնաբերդի պարիսպների քանդումով վերացվում են Միջնաբերդի և բուն քաղաքի միջև սահմանները, ինչի արդյունքում վարչական-ադմինստրատիվ իշխանությունը հայտնվում է քաղաքային տարածքում: Քաղաքի կենտրոնում կառուցվում են նոր հրապարակներ, փողոցներ և հասարակական շինություններ: Առաջանում են հանրային նոր տարածքներ՝ զբոսայգիներ, պուրակներ, գրադարաններ, թատրոններ, թեյարաններ, սրճարաններ և այլն: Անցկացվում է լուսավորություն, կառուցվում են շատրվաններ:

Ամենակարևոր տարբերությունը նախորդ՝ պարսկական տիրապետության շրջանի համեմատ այն է, որ վերոհիշյալ տարածքները առաջանում էին ոչ թե ինքնաբերաբար ու անկանոն կերպով, այլ հատուկ մշակված հատակագծերի հիման վրա: Այդ փոփոխությունների իրականացումը մեծ մասամբ վերաբերում է 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դ. սկզբներին:

2.4 Հանրային տարածքները Խորհրդային շրջանում: Նոմենկլատուրային տարածքների հանրությունը: Խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիներին գրեթե ամբողջովին վերանայվում է Երևանի հատակագիծը: Ոչ միայն նախագծվում են բազմաթիվ նոր հրապարակներ և զբոսայգիներ, այլև սահմանվում են դրանց հստակ գործառնությունները, վարքի ու հաղորդակցության կանոնները, ըստ էության նաև՝ համախմբման բուն գաղափարը՝ խորհրդային հասարակությունը: Բոլոր՝ քիչ թե շատ կենտրոնական հանրային տարածքներում կանգնեցվում են հուշարձաններ և քանդակներ, որոնք այս կամ այն կերպ ամրագրում են խորհրդային հասարակարգի գաղափարախոսությունը: Քաղաքի հանրային տարածքներում բացառվում էր հաղորդակցության այն բոլոր եղանակներն ու ձևերը, որոնք չէին համապատասխանում դրանց նոմենկլատուրային սահմանմանը: Նույնիսկ հանրային տարածքներում գտնվելու ժամանակը սահմանվում է իշխանության կողմից: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ խորհրդային հանրային տարածքները կարելի է բնութագրել իբրև նոմենկլատուրային հանրային տարածքներ, իսկ հանրությունը՝ նոմենկլատուրային հանրություն:

ԳԼՈՒԽ III

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

3.1 Հանրային տարածքների քաղաքականացումը: Քաղաքական հրապարակի հանրությունը /1988-1992թթ/: Քննվող ժամանակահատվածում հանրային նոր տարածքներ չեն ստեղծվում, սակայն փոխվում են դրանց մի մասի գործառնությունները ու առաջնանյութությունը: Ի մասնավորի՝ հանգստի գոտի համարվող Օպերայի և բալետի թատրոնի հրապարակը վերածվում է քաղաքական ելույթների տարածքի: Այդ միտումը նկատվում է նաև մի շարք այլ պողոտաներում և հանգստի համար նախատեսված վայրերում /Թամանյանի անվան հուշահամալիր, Բաղրամյան պողոտա, Մաշտոցի պողոտայի՝ Մատենադարանին հարող հատված և այլն/: Այդ վայրերում հանրության խոշոր կուտակումների և հաղորդակցության խորքային /մետագործառնությային/ նպատակը խորհրդային նոմենկլատուրային սահմանափակումներից ձեռքազատվելը և համազգային քաղաքական համախմբումն է նոր գաղափարների /արցախյան հիմնախնդիր, անկախացում, էկոլոգիական ճգնաժամը և այլն/ շուրջ: Քաղաքական համախմբման գործընթացը նպաստում է հանրության համախմբմանը նաև մի շարք այլ մակարդակներում՝ ենթակենթիվ, սոցիալական, մասնագիտական, տարիքային, գենդերային: Գործառնության տեսանկյունից նույնպես գլխավոր հրապարակ դարձած Օպերայի և բալետի թատրոնի հրապարակը բավական բազմազան է, որտեղ քաղաքական ելույթներից բացի կազմակերպվում են ժամանցային և այլ ծիսական միջոցառումներ՝

ասմունք, պար, երգ, թաղում: Քանի որ քաղաքական համախմբման բուն գործընթացները ընթանում են հրապարակներում, ապա այս փուլը պայմանականորեն անվանել ենք քաղաքական հրապարակի ժամանակաշրջան, իսկ հանրությունը՝ քաղաքական հրապարակի հանրություն:

3.2 Հանրային տարածքների առևտրականացման գործընթացը 1992-2010թթ

Պայմանավորված Հայաստանի անկախացմանը հաջորդած տնտեսական ճգնաժամով, քաղաքային բնակչության մի զգալի մասի եկամտի ուղղակի կամ կողմնակի աղբյուր է դառնում առևտուրը, ինչը հանգեցնում է մի շարք հանրային տարածքների առևտրականացմանը: Կարելի է ասել, որ այս փուլում հանրությանը համախմբող բուն գաղափարը դառնում է հենց առևտուրը, որն առավել խտացված կերպով ներկայանում է նախկինում ժամանցի գոտի հանդիսացող՝ Բուզանդի և Արամի փողոցների միջև գտնվող պուրակում ծավալվող առևտրում, որը հայտնի է Վերնիսաժ կամ Նոր վերնիսաժ անվանումներով: Այստեղ կարելի էր հանդիպել առևտրի, ժամանցի և նույնիսկ պարզ արտադրության իրականացման այնպիսի ձևերի, որոնք բնորոշ էին ուշ միջնադարի Երևանի շուկա-հրապարակներին՝ միայն մի բացառությամբ: Վերնիսաժի տարածքում բացակայում էր գլխավոր առևտրական խորհրդանիշը՝ կշեռքը /դանթար/: Սա վկայում էր այն մասին, որ հանրային այս տարածքը առևտրի համար անհամեմատ մատչելի տարածք էր, ազատ էր հարկերից ու տուրքերից, ուստի և բացառվում էր իշխանական տնտեսական ներկայությունը ամրագրող խորհրդանիշի առկայությունը:

3.3 Հանրային տարածքների մասնավորեցումը և կեղծ /կվազի/ հանրային տարածքների ձևավորումը/1999-2010թթ/: Այս փուլում հանրային տարածքների մի մասը ենթարկվում է հատվածային կամ ամբողջական մասնավորեցման: Նախկին մանրավաճառ առևտրային սեղանիկների ու փոքր կրպակների փոխարեն կառուցվում են առևտրի ու թանկարժեք ժամանցի խոշոր կենտրոններ, հյուրանոցներ և սրճարաններ, հանրային տարածքներում իրականացվող առևտրային գործունեությունը ենթարկվում հարկման, մանր առևտրով զբաղվողների մեծ մասը դուրս է մղվում առևտրի ոլորտից: Այս գործընթացը ենթադրում էր մի կողմից, առևտրի, որպես հանրությանը համախմբող գաղափարի թուլացում, մյուս կողմից, հանրային տարածքները համախմբող այլ գործառնությունների՝ ժամանցի, քաղաքականության և այլլ նպատակներով օգտագործելու հնարավորությունների սահմանափակում: Առևտրի, իբրև համախմբող գաղափարի թուլացմանը նպաստում են նաև 1990-ական թթ վերջերին երկրում նկատվող տնտեսական աճի և զբաղվածության նոր ոլորտների ստեղծման միտումները, ինչպես նաև առևտրականության շերտավորման գործընթացը, ինչի հետևանքում

որոշակի դժկամ և անբարեպաստ վերաբերմունքն է ձևավորվում առևտրական գործունեության նկատմամբ:

3.4 Հանրային տարածքների մասնավորեցման դեմ պայքարը և քաղաքացիական հասարակությունը: /2010-2015թթ/ Այս ժամանակահատված նշանավորվում է հանրային տարածքների մասնավորեցման դեմ սկիզբ առած քաղաքացիական շարժումներով, որոնք բացի զուտ հանրային տարածքների մասնավորեցումը կանխելուց /Վիշապների պուրակ, Մաշտոցի այգի, Կինո Մոսկվայի ամառային դահլիճ, Երևանի տարբեր բազմաբնակարանային շենքերի բակային տարածքներ/, հետապնդում են հասարակական համախմբմանը նպաստող այլ նպատակներ՝ հարկային և գնային քաղաքականության մատչելիություն, կոռուպցայի դադարեցում և սոցիալական բնույթի տարբեր խնդիրների լուծում /Չեմ վճարելու 150 դրամ, ԴԵՄ ԵՄ, Էլեկտրիկ Երևան և այլն/: Քաղաքացիական շարժումների այս փուլում արդեն նկատելի է դառնում մեկ այլ համախմբման տարածքի՝ սոցիալական ցանցերի /Ֆեյսբուք, Թուիթեր/ աճող նշանակությունը, որտեղ ձևակերպվում են շարժման հիմնական գաղափարները, մոտեցումները և գործողությունները:

3.5 Հանրային տարածքների վիրտուալ հեռանկարը: Կարելի է ասել, նոր ներկա փուլում քաղաքային հանրային տարածքները առավելապես օգտագործվում են ոչ թե որպես առերես հաղորդակցության և գաղափարների գեներացման տարածքներ, այլ գործողության տարածքներ: Ընդորում, այդ տարածքները շատ հարավոփոխ և մոբիլ են և կարող են ներառել ինչպես հրապարակները, այնպես էլ պոդոտաները, պուրակները, բազմաբնակարան շենքերի բակերը: Իսկ գաղափարների շուրջ համախմբումը իրականացվում է գլխավորապես վիրտուալ տարածքներում: Մյուս կողմից սա չի նշանակում, որ հանրային իրական տարածքում առերես մեջ չլինելով մարդիկ առհասարակ չեն ներգրավված որևէ հաղորդակցության մեջ: Բջջային հեռախոսները, պլանշետներն ու նութբուքերը հնարավորություն են տալիս այգու կամ այլ հանրային տարածքում հանգրվանած քաղաքացուն զրուցել ու մտքեր փոխանակել այլ տարածքներում գտնվող ծանոթների ու անծանոթների հետ: Է. Ռեյֆի խոսքերով՝ հանրային տարածքներն այսօր հաճախ վերաուղղված տարածքներ են /redirected places/ դեպի ուրիշ տարածքները:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ ֆիզիկական նկարագրի՝ Երևանի քաղաքային պատմության մեջ կարելի է առանձնացնել բաց /անծածկ/ հանրային տարածքների հետևյալ տիպերը՝ հրապարակ, այգի, պուրակ, պոդոտա, կրոնական հաստատությունների և բնակելի

շենքերի բակերը: Մատչելիության տեսանկյունից հանրային տարածքները կարելի է բաժանել համընդհանուր և խմբային տեսակների: Թափանցիկության տեսանկյունից առանձնանում են հանրային տարածքների բաց տեղեկատվական և փակ տեղեկատվական տարածքներ: Հաղորդակցային առումով հանրային են դիտարկվում այն տարածքները, որտեղ կարող է իրականացվել տարբեր մակարդակների՝ խոսքային /բանավոր և պատկերագրային/, ոչ խոսքային /կինետիկ, տաքեսիկ, արքեսուարային/, գործողության /ակցիոնիստական/ և ապրանքային հաղորդակցություն: Ըստ գործառույթի քաղաքի հանրային տարածքները տիպաբանվում են՝ հանդեսայինի, հանգստի, ժամանցայինի, տնտեսականի: Միևնույն հանրային տարածքը կարող է ծառայեցվել տարբեր գործառույթների, բայց սրանց շարքում սովորաբար գերիշխում է դրանցից մեկը:

Հանրային տարածքի համապարփակ գործառույթը կամ մետագործառույթը, քաղաքային հանրության համախմբումն է ամբողջ քաղաքի կամ դրա առանձին համայնքների մակարդակում: Այդ տեսանկյունից կարելի է առանձնացնել գլխավոր և երկրորդական հանրային տարածքները: Համաքաղաքային համախմբման հիմքում միշտ ընկած է որևէ գաղափար կամ գործունեություն, որը բացառում է քաղաքային բնակչության տարբեր խմբերի «անհանդուրժելի» առանձնահատկությունները և խրախուսում «հանդուրժելի» նմանությունները, ինչի ամենակարևոր ասպարեզը հենց գլխավոր հանրային տարածքն է: Երբ հանրային տարածքը դադարում է համախմբող գործառույթ կատարելուց, ապա վերանայվում է տարածքի համախմբող գաղափարը կամ գործունեությունը, կամ ստեղծվում է նոր հանրային տարածք՝ նոր համախմբող գաղափարով: Այդպես սովորաբար տեղի է ունենում, երբ քաղաքային բնակչության կազմում հայտնվում են նոր կրոնական, էթնիկական, մասնագիտական, սոցիալական խմբեր, որոնք խնդիր ունեն քաղաքային տարածքում ինտեգրվելու: Կամ քաղաքային բնակչության կազմում նկատվում է նշված տարբեր խմբերի քանակական և տնտեսական հարաբերակցության կտրուկ փոփոխություն: Ըստ էության համախմբման գաղափարը ամենաառանցքային գործոնն է, որ պայմանավորել է Երևանի հանրային տարածքների սոցիալ-մշակութային փոխակերպումները մեր կողմից դիտարկված տարբեր ժամանակահատվածներում: Ինչպես ցույց է տրվել Երևանի գլխավոր հանրային տարածքների օրինակով, տարբեր ժամանակահատվածներում իբրև համախմբող գաղափարներ են հանդես գալիս կրոնական ընդհանրությունը, առևտրական գործունեությունը, միևնույն տեղեկատվությունը սպառելը, քաղաքական ընդհանրությունը, սոցիալական արդարությունը և այլն: Այդուհանդերձ, ինչպես կարելի է նկատել, համախմբմանը ծառայող որևէ գաղափար ավելի շատ առիթ է, քան բուն նպատակ, իսկ բուն նպատակը իրականում հանդիսանում է հենց

համախմբումը: Սա երևակվում է մի քանի կոնկրետ դրվագներում ա/համախմբման գաղափարի իրականացումից հետո մարդիկ մնում են հանրային տարածքներում և շարունակում են հաղորդակցվել: Բ/հաճախ շահարկվող համախմբման գաղափարը երկրորդական դեր ունի մարդկանց հաղորդակցության մեջ և հաղորդակցության ընթացքում կարող են շրջանառվել այլ թեմաներ: Գ/համախմբման բուն գաղափարից բխող գործողություններից զատ հանրային տարածքում իրականացվում են նաև այլ գործողություններ: Օրինակ, շուկա-հրապարակում կամ քաղաքական հրապարակում կամ սոցիալական արդարության համար պայքարի տարածքներում /Մաշտոցի պուրակ, Բաղրամյան պողոտա/ կազմակերպվում են թատերական ներկայացումներ, գրականության ընթերցումներ, ասմունք, գիտական քննարկումներ, պար և երաժշտություն, արվեստային փերֆորմանսեր և հաղորդակցության բազմաթիվ այլ ձևեր, որոնց մենք անդրադարձել ենք ատենախոսության երկրորդ և երրորդ գլուխներում:

Ատենախոսության թեմայով հրատարակված հոդվածներ:

1. Մարգարյան Լ.Ն., Քաղաքացիական ակտիվիզմը որպես սոցիալ-մշակութային նոր ֆենոմեն Հայաստանի քաղաքական կյանքում, «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, գիտական հոդվածների ժողովածու – 1 (23), 2016 թ. , էջ 413-421:
2. Մարգարյան Լ.Ն., Բակի վերահանրայնացման միտումները Երևանում` արդի փուլում, «Կանթեղ» գիտական հոդվածներ, 2016, .թիվ 2(67), էջ 271-277:
3. Մարգարյան Լ.Ն. Հանրային տարածքները հնագույն Երևանում, «Էջմիածին» հանդես- Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, թիվ 5, 2016 թ. , էջ 140 – 146:

Маргарян Левон Николаевич

Трансформации публичных пространств г. Еревана

Резюме

Цель диссертации – исследование социально-культурных преобразований общественных территорий города Еревана в историческом контексте. История общественных территорий Еревана разделения на девять этапов, в основе которых учитывалась сама функция и идея, объединяющая общественную территорию в данный период.

Так, *на первом этапе*, сама функция основного вида общественной территории

городских населенных пунктов бронзового века и урартского периода, раскопанных на территории современного Еревана (Шенгавит, Эребуни, Тейшабаини) – религиозно-обрядовая, предполагающая наличие святилищ и религиозные и военные церемонии, посвященные богам войны (Эребуни, Тейшебаини). *На втором этапе* – в период Турецко-персидского владычества (XV в. – начало XIX в.), сама идея, объединяющая общественность – это торговля, а главная общественная территория – рынок-площадь, в центре которого расположены главные символы Рынка – большие и малые весы. *Третий этап* (вторая половина XIX в. – первая четверть XX в.) характеризуется наличием новых общественных территорий, которыми становятся бульвар (Колумбийский) и продолжающаяся из него улица (Астафян). Эти территории служат деятельности общественных властей, различным сферам искусства и обмену новостей и идей вокруг моды. Не случайно, что по соседству с Бульваром и Астафян расположены театры, клубы, книжные магазины, газетные киоски, а также многочисленные иные территории общественного досуга – кафе, чайные и др. *Четвертый этап* включает в себя советский период, когда не только проектировались многочисленные новые площади и скверы, но и устанавливалась сама их объединяющая идея – советский интернационализм. Во всех более-менее центральных общественных территориях устанавливались памятники, закреплявшие идеологию советского строя. В общественных территориях города исключались все виды коммуникаций, не соответствовавшие их номенклатурному определению. Учитывая это обстоятельство, советские общественные территории можно охарактеризовать как номенклатурные общественные территории.

Следующие 5 этапов функциональных преобразований общественных территорий Еревана касаются постсоветского периода. *На пятом этапе* (1988-1992 гг.) новых общественных территорий не создается, однако меняются их функции и приоритеты. В частности, площадь Театра оперы и балета, считавшаяся зоной отдыха, превращается в территорию политических выступлений. Эта тенденция наблюдается и в ряде других общественных территориях (мемориальный комплекс имени Таманяна, проспект Баграмяна, прилегающая к Матенадарану территория проспекта Маштоца и др.). Глубинная цель крупных общественных скоплений в указанных местах – освобождение от ограничений советской номенклатуры и политическое сплочение вокруг новых идей (арцахская проблема, независимость, экологический кризис и др.). Поскольку сами процессы политического сплочения разворачиваются на площадях, этот период мы охарактеризовали как этап “политической площади”. *На шестом этапе* (1993-1998 гг.), в связи с экономическим кризисом, последовавшим за независимостью Армении, источником дохода значительной части городского

населения становится торговля, что приводит к коммерциализации ряда общественных территорий. Можно сказать, что на этом этапе самой идеей, сплочающей общество, становится именно торговля, которая наиболее целостно проявляется в торговле в бывшей зоне отдыха (между улицами Бюзанда и Арами), известной под названием Вернисаж. Здесь можно встретить такие формы торговли, досуга и даже осуществления простого производства, которые были характерны для средневековых рынков-площадей, лишь с одним исключением. На территории Вернисажа отсутствовал главный символ торговли – весы. Это свидетельствовало о том, что эта общественная территория была самой доступной территорией для торговли, свободной от налогов и пошлин, следовательно, и исключалось наличие символа, закрепляющего экономическое присутствие власти.

На седьмом этапе (1999-2010гг.) общественные территории Еревана подвергаются частичной или полной приватизации, вместо бывших торговых столиков и маленьких ларьков строятся крупные центры торговли и дорогого досуга, гостиницы. Коммерческая деятельность подвергается налогообложению, большая часть людей, занимающихся мелкой торговлей, выбывают из сферы торговли. Этот процесс предполагает, с одной стороны, ослабление торговли как объединяющей общества идеи, а также иных функций, объединяющих общественные территории – ограничение возможностей использования с целью досуга, политики и др. Как непосредственное следствие этого на следующем, *восьмом этапе (2010-2015гг.)* – движения, начавшиеся против приватизации общественных территорий, которые кроме того, что выступали против самой приватизации общественных территорий (сквер Вишапов, парк Маштоца, летний зал кинотеатра Москва, дворовые территории многоквартирных домов), преследовали и иные цели общественного сплочения – доступность налоговой и ценовой политики, прекращение коррупции, решение иных вопросов социального характера (Не буду платить 150 драм, Я ПРОТИВ, Электрический Ереван и др.). На этом этапе гражданских движений уже становится заметным растущее значение другой территории сплочения – социальных сетей (Фейсбук, Твиттер), где формируются основные идеи, подходы и действия движения. На настоящем – девятом этапе (2015г. и далее), можно сказать, что в физическом смысле общественные территории максимально используются не как территории генерализации коммуникации и идей, а как территории действия. Причем, эти территории очень переменчивы и мобильны и могут включать в себя как площади, так и проспекты, скверы, дворы многоквартирных домов. А сплочение вокруг идеи осуществляется главным образом в виртуальных пространствах.

Levon N. Margaryan
Transformations of public spaces of Yerevan
Summary

This thesis aims to study the historical evolution of the social-cultural transformations of the public spaces in the city of Yerevan. The history of Yerevan's public spaces is divided into nine stages, considering the main functions and the ideas of unification by public spaces on each stage.

Accordingly, in the first stage, in today's territory of Yerevan the excavated urban inhabitations of Bronze and Urartian ages (Shengavit, Erebuni, Teishebaini) by the type of the public space, which is the square, with the main function being religious and sacred which assumes the presence of sanctuary of war gods/ Erebuni, Teishebaini/ dedicated to religious and war ceremonies.?? In the second stage, during the Turkish-Persian domination (XV- early XIX) the main concept uniting the public is the trade and the main public space is the market-square with the main symbols of the Market: big and small scales placed in the center. In the third stage (second half of XIX- XX first quarter) is described by the many new types of public spaces which are the boulevard (Kolumbiyskii) and its following avenue (Astafian). These areas serve for the activities of urban authorities and for exchanging the ideas and news about different spheres of art and fashion. It's not surprising that across the Boulevard and Astafian Street, there are theaters, clubs, bookstores, newsstands and also numerous closed areas of public entertainment such as cafes, tearooms, etc. The fourth stage is the soviet period when many squares and parks are designed and defined by their precise functions, with rules of behavior and communication, basically defining the concept of unification as the soviet internationalism. In almost all central public spaces, monuments are erected to fix the ideology of the soviet public order. In the public spaces of the city, all of the non-nomenclatural ways of communication were excluded. Considering this aspect, the soviet public spaces can be defined as nomenclatural.

The following five stages of functional transformation of Yerevan's public spaces are related to the post-soviet era. In the fifth stage /1988-1992/ no public spaces are created but the functions and priorities of the existing ones are changed. For instance the square of Opera and Ballet theatre considered recreation zone is transformed to a space of political speeches. This tendency is also noted in some other public spaces too, such as the Memorial Complex after Tamanyan, the Baghramyan Avenue, the surrounding area of Matenadaran on the Mashtots Avenue etc. In the mentioned places, the essential aim of public's large accumulations is to get rid of the soviet nomenclatural restrictions, as well as the political consolidation around new ideas of Artsakh problem, the independence, ecological crisis etc.

As long as the main processes of political consolidation are taking place in the squares, we have defined this stage as the era of “political square”. In the sixth stage (1993-1998) because of the economic crisis followed by the independence of Armenia, trade becomes a source of income for a large number of urban population. This causes a commercialization of many public spaces. We can say that in this stage, the main idea uniting the public is the trade which is presented in a more complete way in the former entertainment area between the Buzand and Aram streets, known as Vernissage. Here we can find the types of trade, leisure and primitive industry which were typical for the Middle Ages with one exception: the main symbol of the trade, the scale, is absent. This shows that this public space was more accessible for trading. It is tax free, so the symbol which fixes the official economical presence could not have place. In the seventh stage (1999-2010) The public spaces of Yerevan were partially or completely privatized. Instead of the former commercial stands, big and expensive commercial and entertainment centers, as well as hotels were built. The commercial activities are taxed. Most of the minor trade dealers were excluded from the commercial sphere. In one hand, this process meant the breakdown of the idea of the trade as the uniting idea of the public. On the other hand, other functions uniting the public spaces were limited too (entertainment, political, etc.). The immediate consequences of this policy in the eighth stage (2010-2015) were the civil movements against the privatization of the public spaces (Vishaps’ Park, Mashtots Park, the summer hall of Moscow Theatre, the yards of multi-residential buildings) which also aimed to promote the public consolidation for other purposes (the tax and price policies, the suspension of corruption, the solution of other social problems: I won’t pay 150 dram, I’M AGAINST, Electric Yerevan, etc.). In this stage of civil movements, the growing importance of another space for consolidation, such as the social networks (Facebook, Twitter, etc.), is notable. Here, the main ideas, the approaches and actions are formed. In the present, the ninth stage (2015-present), we can say that the public spaces in the physical matter generally are not used as a space for communication and generating ideas, but as spaces for actions. On a side note, these spaces are always changing and mobile, and can include not only squares, but also avenues, parks, the yards of multi-residential buildings. And the consolidation around the ideas is mainly executed in virtual spaces.